

Զ. Վ. ԽԶՄԱԼԵՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԱՏԵՆԱԴՐԱԲԱՆԸ ԳՐՔԱՅԻՆ
ՖՈՆԴԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐԶԸ

Հայկական ՍՍՌ Մատենադրանը հայ ժողովրդի կուլտուրա-
յի հուշարձաններից ամենախոշորն է:

Այստեղ են կենտրոնացված հայ և հարեւան ժողովուրդների
5—18-րդ դարերի ձեռագիր ու տպագիր գիտական աշխատություն-
ները:

Հայ ժողովուրդը դարեր շարունակ կարողացել է կուլտուրա-
յի այդ հուշարձանները հերոսաբար պաշտպանել օտարերկրյա
(պարսիկների, արաբների, թուրքերի և այլն) հարձակումներից։
Այդ հարձակումների հետեւանքով է, որ ձեռագրերը, արխիվային
վավերագրերը, ինչպես նաև հնատիպ գրքերը պահպել են խոնավ
նկուղներում, պատերի մեջ, ընդ որում հարկ եղած խնամքի բա-
ցակալության պատճառով նրանց վրա սկսել են զարդանալ տար-
բեր տեսակի միկրոօրգանիզմներ, հիմնականում բորբոսասնկեր,
որոնք առաջ են բերել թղթի քալքարում կամ ցեմենտացում, որոշ
ձեռագրերի և արխիվային վավերագրերի տեքստեր դարձնելով
դժվար ընթեռնելի կամ անընթեռնելի։

Հայաստանում Սովետական իշխանության հաստատումից հե-
տո միայն հնարավոր դարձավ Մատենադրանում գտնվող ձեռա-
գրերի, արխիվային վավերագրերի և տպագիր գրականության
պահպանման գործը դնել պաշաճ բարձրության վրա։ Կառուցվել
է ոչ միայն հարմարագույն շենք, այլև հատուկ լաբորատորիա, որտեղ
ուսումնասիրվում են թղթի քալքարուման գրդապատճառները և
նրանց դեմ է գեեկտիվ միջոցառումների մշակման գործը։

Ռեստավրացիոն աշխատանքներ կատարելու և ձեռագրերի
ու արխիվային վավերագրերի երկարակնցությանն ապահովելու
համար Մատենադարանին կից սանդղի է ռեստավրացիոն բա-
ժինություն գլազ բաժնում կատարվում են ո՞չ միայն արտադրական
բնալիթ կրող աշխատանքներ՝ մաքրում, ախտահանում, մշակում,
ռեստավրացիա և կազմ, այլև դիտական բնույթի գործնական աշ-
խատանքներ։

Սիստեմատիկ կերպով կատարվում է ձեռագրերի, արխիվալին գավերագրերի և ամբողջ գրքալին ֆոնդի ստուգում՝ մաքրության ու առողջական վիճակի տեսակետից և հարկ եղած դեպքում առանձնացում են հատուկ պահարանների մեջ՝ հետազա աշխատանքների համար:

Բացառությամբ հուլիս—օգոստոս ամիսների, օդափոխման հարմարանքի միջոցով ապահովում է գրապահոցների օդի չերմությունը՝ $15-20^{\circ}$ -ի և հարարերական խոնավությունը՝ $45-60^{\circ}/_0$ -ի սահմաններում, որպիսի հանդամանքը մեծ նշանակություն ունի գրքերի երկարակեցության համար:

Ձեռագրատունը և մյուս գրապահոցները երեք ամիսը մեկ անգամ փոշեղբիվում են ֆորմալինի $20^{\circ}/_0$ -ալին լուծուլիթով, որի հետևանքով օդի միկրոօրդանիզմների թիվը դգալի չափով պահպառմ է:

Վարակված, քարքարված և վատ վիճակի հասած ձեռագրերը ամբողջությամբ կամ առանձին թերթեր, սկսած 1946 թվականից, մշակվում են ժելատինալին ամրացնող լուծուլիթով, որը քարքարված թերթերին տալիս է որոշ ամրաթյուն:


Վարակված, ինչպես նաև նոր գնդած ձեռագրերը, արխիվալին վավերագրերը և հնատիպ գրքերը, առաջինները՝ բուժման, մյուսները պրոֆիլակտիկ նպատակով, ենթարկվում են պարաֆորմալինալին վարականության կամ ֆորմալինի $20^{\circ}/_0$ -ալին լուծուլիթի միջոցով՝ թերթալին. ախտահանման, իսկ մատաղաթի դեմքում՝ $0,5^{\circ}/_0$ տիմոլի ազգեցությամբ: Միկրոօրդանիզմների տեսակները և ախտահանման արդյունքները պարզելու նպատակով կատարվում է ռիփանդք նմանշների և մնակալին սպորների միկրոզիվական տառմասնիրություն՝ մշակումից առաջ և հետո:

Ռեստավրացիոն աշխատանքները կատարվում են ցորենի $30^{\circ}/_0$ ալյուրից պատրաստված սոսինձով, որի մեջ, որպես անտիսեպտիկ նյութ, օգտագործվում է $0,8-1^{\circ}/_0$ թ-նաֆտոլ:

Այդ աշխատանքները կատարվում են հատուկ թղթերի (միկալինանի, կոնդենսատորնի և ալլն) միջոցով, որոնք տալիս են ամրություն և տեքստերի կորուստ տեղի չի ունինաւմ: Ձեռագրերի ցեմենտացված կամ կպած թերթերն անշատվում են սարք թրջոցների և գոլորշու միջոցով:

Բուժված, մշակված և ցեմենտացված վիճակից դուրս բերված ձեռագրերի թվին են պատկանում հետևյալ համարները՝ 933 (Տոնական, 16-րդ դ.), 3440 (Խրատական, 18-րդ դ.), 3658 (Հայ-

вѣ. I. № 4705 Ахтамъхъуз (XVI в.), съ рукою и мѣд. ю[жн]о-вост.



Նկ. 2. № 4795 ձեռագիրը ախտահանումից և սեսալրացիայից հետո:



մակուրք, 14-րդ դ.), 4519 (Ճաշոց, 14-րդ դ.), 4162 (Մաշտոց, 15-րդ դ.), 5868 (Մաշտոց, 17-րդ դ.), 6524 (Աղթարք, 19-րդ դ.), 3938 (Քարոզզիրք, 17-րդ դ.), 4004 (Դիրք հարցմանց, 15-րդ դ.), 4076 (Ավետարան, 17-րդ դ.), 7577 (Մազմոս, 17-րդ դ.), 8131 (Ավետարան, 17-րդ դ.), 9487 (Մաշտոց 16-րդ դ.), 4138 (Մեկնաթիւն, 17-րդ դ.), 4456 (Ավետարան, 14-րդ դ.), 9552 (Ավետարան, 15-րդ դ.), և ալլն Ընդհանուր թվով մշակված է մոտ 120 ձևագիր, որոնք փրկված են հետագա քայլքայումից:

Ստորև բերում ենք չմշակված և մշակված № 4795 ձևագրի (16-րդ դար) լուսանկարները:

Միկրոբիոլոգիական լաբորատորիան աշխատանքներ է կատարում թղթի քայլքայում առաջացնող միկրորդանիզմների դեմ պայքարելու ուղղությամբ, ընդ որում փորձարկվում են ճառագայթասնկերից ստացված մի շարք անտիբիոտիկ և ալլ նրանքից: Այս ուղղությամբ աշխատանքները շարունակվում են:

3. В. Խզмалյան

К вопросу о хранении книжного фонда Матенадарана Армянской ССР

Р е з ю м е

После установления Советской власти в Армении создались благоприятные условия для хранения древних рукописей и архивных документов.

При отделе реставрации Матенадарана с 1949 года организована микологическая лаборатория. В лаборатории ведутся работы по профилактике и лечебным мероприятиям пораженных бумаг. Против плесневых грибов и других микроорганизмов, разрушающих бумагу, в качестве мер борьбы испытывается ряд новых антибиотических и других средств, с целью создания условий для долгого хранения ценнейшего клада армянской литературы.

В результате наших исследований из книжного фонда Матенадарана вылечено около 120 рукописей. На рис. 1 показана больная рукопись, на рис. 2—вылеченная рукопись.

Приняты также профилактические меры против существующих заболеваний книжного фонда.